ԿԻՆԵՄԱՏՈԳՐԱՖԻԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

« » _____ 2023 թվականի

N - Ն

ԿԻՆԵՄԱՏՈԳՐԱՖԻԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կինեմատոգրաֆիայի մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել՝ կինեմատոգրաֆիայի ազգային մարմնի հոգաբարձուների խորհրդի անդամների և ազգային մարմնի գործադիր տնօրենի ընտրության կարգն ու գնահատման չափանիշները՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից 2 ամիս հետո:

ՆԱԽԱՐԱՐ Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Հավելված

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի

նախարարի 2023 թվականի

_____ ___-ի N ___-Ն Հրաման

ԿԻՆԵՄԱՏՈԳՐԱՖԻԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

1. **ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույն կարգով սահմանվում են կինեմատոգրաֆիայի ազգային մարմնի հոգաբարձուների խորհրդի անդամների և ազգային մարմնի գործադիր

տնօրենի ընտրության կարգն ու գնահատման չափանիշները:

2. ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՈՒՆՆ ՈՒ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

2. Ազգային մարմնի խորհուրդը ձևավորվում է 3 տարի ժամկետով:
3. Ազգային մարմնի կառավարման բարձրագույն մարմինը՝ խորհուրդը կազմվում է յոթ անդամից, որում ընդգրկվում են՝

1) լիազորված պետական մարմնի ղեկավարը՝ ի պաշտոնե.

2) հանրային ֆինանսների կառավարման ոլորտում լիազորված պետական մարմնի ղեկավարը՝ ի պաշտոնե.

3) տնտեսության ճյուղերի զարգացման ոլորտում լիազորված պետական մարմնի ղեկավարը՝ ի պաշտոնե.

4) չորս մասնագետ (այդ թվում՝ օտարերկրյա)՝ մրցութային կարգով:

4. Խորհրդի անդամ կարող է ընտրվել լիազորված պետական մարմնի սահմանած չափանիշների միավորների հանրագումարով առավելագույն բալեր հավաքած մասնագետներից այն թեկնածուն, որն ունի կինոարվեստի բնագավառում բարձրագույն կրթություն և բավարարում է հետևյալ պայմաններից որևէ մեկը.

1) ստացել է կինոփառատոնի մրցանակ.

2) համատեղ արտադրության որևէ ծրագրի մրցանակակիր է.

3) ունի կինոփառատոնի ժյուրիի անդամի աշխատանքի փորձ:

5. Ազգային մարմնի խորհրդի կազմում չի կարող առաջադրվել այն անձը, որը միաժամանակ հանդիսանում է Ազգային մարմնի տնօրեն կամ աշխատակից:
6. Խորհրդի անդամի լիազորությունները, լիազորությունների դադարեցման հիմքերը, պարտավորությունները սահմանվում են «Կինեմատոգրաֆիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Ազգային մարմնի կանոնադրությամբ:
7. Սույն կարգի 2-րդ կետով սահմանված խորհրդի լիազորությունների ժամկետը լրանալուց 30 աշխատանքային օր առաջ խորհրդի անդամին առաջադրող մարմինը, սույն կարգի պահանջներին համապատասխան, առաջադրում է խորհրդի անդամի նոր թեկնածու:

8. Ազգային մարմնի ենթակայության փոփոխության դեպքում լիազորված մարմնի կողմից առաջադրված խորհրդի անդամների ընդգրկվածության համամասնությունը համապատասխանեցվում է սույն կարգի պահանջներին:
9. Լիազորված մարմինը, հիմք ընդունելով առաջադրող մարմնի կողմից առաջարկված խորհրդի անդամի թեկնածուի տվյալները, սույն կարգի պահանջներին համապատասխան, 3 աշխատանքային օրվա ընթացքում հաստատում է խորհրդի կազմը կամ սույն կարգի պահանջների խախտման առկայության դեպքում՝ մերժում է խորհրդի կազմում առաջարկված տվյալ անձի թեկնածությունը:
10. «Կինեմատոգրաֆիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերում սույն կարգի 2-րդ կետով նախատեսված ժամկետից շուտ խորհրդի անդամի լիազորությունները դադարեցվելու դեպքում, խորհրդի նոր անդամի լիազորություններն ավարտվում են խորհրդի լիազորությունների ժամկետի ավարտի հետ միաժամանակ:
11. Խորհրդի առաջին նիստը վարում է խորհրդի տարիքով ավագ անդամը:
12. Խորհուրդը փակ քվեարկությամբ ընտրում է խորհրդի նախագահ՝ խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:
13. Եթե քվեարկության արդյունքում որևէ թեկնածու չի ստանում ձայների մեծամասնությունը, ապա 2 աշխատանքային օրվա ընթացքում անցկացվում է նոր քվեարկություն:
14. Նոր քվեարկության արդյունքում ևս խորհրդի նախագահ չընտրվելու դեպքում ընտրված է համարվում առավել ձայներ ստացած թեկնածուն:
15. Խորհրդի նիստերն արձանագրում է խորհրդի նախագահի կողմից առաջադրված և խորհրդի կողմից ձայների պարզ մեծամասնությամբ ընտրված (քվեարկության բաց կամ փակ ձևը որոշում է խորհուրդը) քարտուղարը:
16. Խորհրդի նիստերը գումարվում են կանոնադրությամբ նախատեսված ժամկետներում և դեպքերում՝ ըստ խորհրդի կողմից հաստատված ժամանակացույցի, ինչպես նաև խորհրդի նախագահի կողմից՝ սեփական նախաձեռնությամբ, լիազոր մարմնի, տնօրենի կամ խորհրդի անդամների 1/3-ի նախաձեռնությամբ:

3. ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ԸՆՏՐՈՒԹՈՒՆ ՈՒ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

17. Լիազորված մարմինը՝ Ազգային մարմնի հիմնադրումից 2-ամսյա ժամկետում հայտարարում է մրցույթ՝ ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնող տնօրենի ընտրության համար:
18. Տնօրենի ընտրության մրցույթին կարող են մասնակցել արվեստի բնագավառում բարձրագույն կրթություն և առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքի փորձ ունեցող Հայաստանի

Հանրապետության գործունակ չափահաս քաղաքացիները:

19. Ազգային մարմնի տնօրենը նշանակվում է 3 տարի ժամկետով.
20. Ազգային մարմնի տնօրեն կարող է ընտրվել «Կինեմատոգրաֆիայի ոլորտի մասնագետների գնահատման չափանիշները հաստատելու մասին» լիազորված մարմնի հրամանով սահմանած չափանիշների միավորների հանրագումարով առավելագույն բալեր հավաքած տնօրենի պաշտոնի երեք հավակնորդներից այն թեկնածուն, որի՝ կինեմատոգրաֆիայի ոլորտի բարեփոխման և զարգացման ծրագիրն արժանանում է խորհրդի հավանությանը:
21. Տնօրենը չի կարող զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական ու ստեղծագործական աշխատանքից, և նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել տնօրենի պաշտոնում: